

Հանդիսավորությամբ նշվեցին Հայոց բանակի 22-րդ տարեդարձին նվիրված միջոցառումները

28.01.2014



Այսօր մարզկենտրոն Կապանում անցկացվեցին տոնական միջոցառումներ՝ նվիրված Հայոց բանակի օրվան, որին մասնակցում էին ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ Վ.Գրիգորյանը, մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներ, Կապանի քաղաքապետ Ա.Հայրապետյանը, բարձրաստիճան զինվորականներ, ազատամարտիկներ: Տոնին առանձնակի շուքով էին պատրաստվել քաղաքում տեղակայված N գորամասի զինձառայողները: Առավոտյան կազմակերպված զինվորական միտինգին գորամասի հրամանատար, գնդապետ Կարեն Մերոբյանը բարեմաղթանքի իր խոսքում մասնավորապես ասաց. «Ցանկանում եմ, որ ձեր զենքերն օգտագործեք միայն ուսումնական վարժանքների ժամանակ»: Տոնի առիթով շնորհավորելով զինվորներին, սպաներին ու ազատամարտիկներին, Սյունիքի մարզպետի տեղակալ Վ. Գրիգորյանը իր խոսքում մասնավորապես նշեց, որ Հայոց բանակի օրը ողջ հայ ժողովրդի տոնն է, և այն իր մեջ մարմնավորում է մեր ժողովրդի հերոսական ոգին, հաղթելու վճռականությունը, ուժն ու անկոտրում կամքը: Տոնի առթիվ Վ. Գրիգորյանը ռազմական գործի բոլոր նվիրյալներին մաղթեց ուժ, եռանդ ու կորով, իսկ հայոց զինվորին՝ բարձր մարտունակություն, հզորություն ու անպարտելիություն: Օրվա կապակցությամբ գորամասի մի շարք զինձառայողներ արժանացան ՀՀ ՊՆ, Կապանի քաղաքապետի, «Ազատամարտ» կոմիտեի ու գորամասի հրամանատարի շնորհակալագրերի ու պատվոգրերի: Այնուհետև տոնական միջոցառումները շարունակվեցին Կապանի Գ. Նժդեհ հրապարակում, որտեղ օրվան համահունչ երաժշտական կատարումներով հանդես եկավ Կապանի քաղաքապետարանի փողային նվագախումբը: Հրապարակում զինվորական հնարքներով ցուցադրական ելույթ ունեցան N գորամասի հետախուզական վաշտի զինվորները:

Կազմակերպվել էր նաև այցելություն Բաղաբուրջի հուշահամալիր, որտեղ ծաղիկներ դրվեցին հայրենիքի նահատակների շիրիմներին և մեկ րոպե լռությամբ հարգվեց նրանց հիշատակը: Տոնական օրը եզրափակվեց Կապանի մշակույթի կենտրոնի հարակից հրապարակում կազմակերպված տոնական համերգով, որին մասնակցում էին կենտրոնի երաժշտական խմբերն ու անհատ կատարողները:

Հայոց բանակի 22-րդ տարեդարձին նվիրված տոնական միջոցառումներ անցկացվեցին նաև մարզի մյուս քաղաքային համայնքներում: